Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01.02.2023 թ. ժ. 16:00 ՀՀ էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Քաղաք Երևան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

1.	Վահան Քերոբյան	Էկոնոմիկայի նախարար՝ ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նախագահ
2.	Ռաֆայել Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ՝ ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղար
3.	Արամ Սալաթյան	«Ինժեներական Ասոցիացիա» ՀԿ–ի խորհրդի նախագահ
4.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
5.	Արկադի Սահակյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ
6.	Վարդան Ուռուտյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
7.	Էլբակ Էլբակյան	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
8.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
9.	Լիլիթ Գևորգյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ
10.	Սամսոն Գրիգորյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

11.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԱՆՁԻՔ

12.	Լենա Նանուշյան	ՀՀ առողջապահություն նախարարի առաջին տեղակալ
13.	Ահարոն Բարսեղյան	ՀՀ առողջապահություն նախարարության պետական առողջապահական գործակալության պետ
14.	Սամվել Խարազյան	Առողջապահական ոլորտի փորձագետ
15.	Արման Խոջոյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
16.	Արմեն Դանիելյան	Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ԺՊ
17.	Զարուհի Մուրադյան	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գործադիր տնօրեն
18.	Լեռնիկ Հարությունյան	ՀՀ պետական եկամուտների և վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ
19.	Օրի Ալավերդյան	ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
20.	Լուսինե Սարգսյան	Հայաստանում բրիտանական դեսպանատուն
21.	Տաթևիկ Գևորգյան	«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

22.	Լիլիթ Հակոբյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետ
23.	Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ
24.	Թամարա Սարգսյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության փորձագետ
25.	Վահե Մխիթարյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի ավագ մասնագետ
26.	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
27.	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
28.	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
29.	Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. Նախորդ նիստերի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցում՝

- Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում զբոսաշրջության խթանման միջոցառումը հաստատելու մասին կառավարության որոշման նախագիծ,
- Մշակող արդյունաբերության ոլորտում մասնագետների ներգրավման միջոցառումը հաստատելու մասին կառավարության որոշման նախագիծ,
- Հայաստանում գործող ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառման խրախուսման միջոցառում
- ՓՄՁ-ների համար բանկային երաշխիքների մասով աջակցության ծրագիր:

ՀԱՐՑ 2. Աշխատանքային պայմանագրերի և աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի հաշվառման և աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակի վերաբերյալ շրջանառվող նախագիծ՝

Նախագծով առաջարկվում է ստեղծել աշխատանքային պայմանագրերի և աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի հաշվառման և աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակ՝ պարտադիր դարձնելով գործատուների կողմից յուրաքանչյուր կնքված պայմանագիր հարթակում ներբեռնումը:

Հարց 3. Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության ժամկետի 25 տարվա վերին շեմի վերանայում՝

Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության ժամկետը կարող է սահմանվել մինչև 25 տարի: Այս նորմը որոշակի զսպող ազդեցություն ունի այն ներդրողների համար, որոնք նախատեսում են համայնքապատկան վարձակալած հողերի վրա հիմնել բազմամյա տնկարկներ:

Հարց 4. Բիզնեսների թվային տրանսֆորմացիան ավտոմատացումը խրախուսող մեխանիզմների ներդրում ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման հետևանքով՝

22 դեկտեմբերի 2022 թվականին ՀՀ Կառավարության նիստում հաստատվեց N 2038–Ն որոշում ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, որի արդյունքում 2023 թվականի հուլիսի 1-ից ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, ինչպես նաև գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը պետք է տպագրեն ոչ թե նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ, այլ 24 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն ունեցող տնտեսավարողները:

Հարց 5. Հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթ՝ բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական հանրակրթական հաստատություններին նվիրատվությունների ծավալը մեծացնելու նպատակով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի կողմից իրականացված քննարկումների, նվիրատուների և նվիրառուների հետ հանդիպումների արդյունքում վեր են հանվել որոշ խնդիրներ, որոնք չեն նպաստում Հայաստանում գործող ԲՈՒՀ-երին, կրթական հաստատություններին նվիրատվության և բարեգործության ինստիտուտների զարգացմանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բազմաթիվ տնտեսավարողներ պատրաստակամություն են հայտնում իրականացնելու ավելի շատ նվիրատվություններ կրթական և գիտական հաստատություններին:

Հարց 6. Առողջապահության պարտադիր ապահովագրության հիմնահարցերի քննարկում

Առողջապահության պարտադիր ապահովագրության հայեցակարգը գործարար համայնքի հետ քննարկվել է մի քանի անգամ, դրանում իրականացվել են որոշ փոփոխություններ, սակայն փոխադարձ ընդունելի տարբերակ չի ստացվել: Գործարար համայնքի մտահոգությունները չեն վերաբերում հայեցակարգով նախատեսվող մեխանիզմների այս կամ այն դրույթների բարելավմանը, այլ ունեն առավել խորքային, սկզբունքային բնույթ:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 1. Հայաստանի ներդրումային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) ղեկավար Հովսեփ Պատվականյանը, Խորհրդի ավագ իրավաբան Հայկ Մալխասյանի համազեկուցմամբ ներկայացրեց նախորդ նիստերի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին ընթացքի վերաբերյալ:

Հարցերի համատեքստում քննարկվեցին նաև խոշոր առևտրի ցանցեր և մատակարարներ առկա խնդիրները, մասնավորապես մատակարարումների համար վճարումների ուշացման խնդիրը: Խորհրդի անդամների կողմից տեղեկացվեց, որ Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կոլեգաների հետ քննարկումների արդյունքում եկել են այն եզրահանգման, որ հարցը հնարավոր է կարգավորել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի վերջին փոփոխությունների, մասնավորապես օրենքում ներդրված բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտի ինստիտուտի շրջանակում:

Բանակցային ուժեղ դիրքի չարաշահման առանցքային դեպքերից է նաև բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտին պատկանող առևտրային ցանցերում մրցակից ապրանքների գների, ցուցադրման եղանակի, տեղի և իրացման համար էական նշանակություն ունեցող այլ պայմանների միջև արհեստական տարբերությունների սահմանումը կամ կիրառումը:

Հարցին արձագանքեց Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ մատնանշելով, որ խնդիրն արդիական է նաև մթերող և մատակարարող կազմակերպությունների համար և խնդրի կարգավորումը արդյունետ չի լին միայն բանակցային ուժեղ դիրքի չարաշահման եզրույթի կարգավորման շրջանակում դիտարկել: Նախարը առաջարկեց հարցի կարգավորման հստակ գործիքներ նախատեսել և դիտարկվող օրենքում, և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում:

ՈՐՈՇՎԵՑ

Նախարար պարոն Քերոբյանը առաջարկմամբ որոշվեց մթերումների հարցը ևս բերել օրակարգ՝ նախաձեռնելով «Առևտրի և ծառայությունների մասին» և «Տնտեսական մրցակցության մասին» ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխություններ: Պարոն Քերոբյանը հանձնարարեց Խորհրդին՝ նախագծի մշակման աշխատանքներում առաջնորդվել միջազգային փորձով՝ դիտարկելով նաև ռուսական համանման փորձը:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 2. Ենթախորհրդի անդամ՝ «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ–ի ներկայացուցիչ Լիլիթ Գևորգյանի զեկուցմամբ ներկայացվեց ներկայումս շրջանառության մեջ դրված ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ անելու նախագիծը, որով առաջարկվում է ստեղծել աշխատանքային պայմանագրերի և աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի հաշվառման և աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակ: Համաձայն զեկուցման՝ նախագծով առաջարկվող, այն է՝ գործատուների կողմից յուրաքանչյուր կնքված պայմանագիր հարթակում ներբեռնելու պահանջի ամրագրումը՝ հավելյալ ֆինանսական և վարչարարական բեռ է դառնալու ՓՄՁ-ների համար: Բացի այդ, աշխատանքային պայմանագրերի հաշվառման էլեկտրոնային համակարգի (հարթակի) ներդրումը՝ ռիսկային է նաև աշխատակիցների տվյալների հասանելիության տեսանկյունից: Մասնավորապես նախագծի ընդունման հանգամանքում տեսչական մարմինը հնարավորություն է ստանում տնօրինել տվյալների շտեմարանը՝ դրանք կիրառելով բարձր ռիսկայնության աստիճան ունեցող գործատուներին, ըստ կարգավորման, բացահայտելու և ստուգումներ իրականացնելու տեսանկյունից:

Նիստի մասնակիցների հիմնական մտահոգությունների մասով պարզաբանումներ ներկայացրեց նաև Խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանը: Մասնավորապես վերջինս տեղեկացրեց, որ հիմնական մտավախությունը կայանում է նրանում, որ նախագծի ներկայիս տարբերակի ընդունման հանգամանքում, տեսչական մարմնի կողմից ռիսկի վերահսկողության գործառույթի իրականացումը իրենից ներկայացնելու է փաստացի կամերալ ուսումնասիրություն և կարող է հանգեցնել գործատուի նկատմամբ տուգանքների կիրառման, քանի որ նախատեսվում է, որ վերհանված արդյունքներով որոշված բարձր ռիսկայնության աստիճան ունեցող գործատուները ներառվելու են ստուգումների տարեկան ծրագրում: Նշված մասով իրենց մտահոգությունները հայտնեցին նաև ենթախորհրդի անդամներ պարոնայք Արկադի Սահակյանը, Արամ Խաչատրյանը և Կարեն Զաքարյանը:

Առկա մտահոգությունների մասով որոշ պարզաբանումներ ներկայացրեց Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ԺՊ Արմեն

Դանիելյանը: Վերջինս տեղեկացրեց, որ նախագծի ընդունմամբ նախատեսվում է բարելավել աշխատաշուկայի թափանցիկությունը, նվազեցնել մարդկային գործոնի դերն ու կոռուպցիոն ռիսկը աշխատանքային իրավունքների վերահսկողության գործընթացում:

Փոփոխության արդյունքում ակնկալվում է, որ համակարգը կնպաստի գործատու-աշխատող փոխհարաբերությունների հաշվետվողականությանն ու աշխատողների իրավունքների պաշտպանության համակարգի բարելավմանը և արդիականացմանը, համակարգի (հարթակի) միջոցով արդեն թվային եղանակով աշխատողը կարող է հսկել իր աշխատանքային պայմանագրի վերաբերյալ ցանկացած փոփոխությունը, իսկ գործատուն իր մոտ իրականացվող պետական վերահսկողության ժամանակ չի կարողանա այն փոփոխել կամ հրաժարվել դրա կատարումից, արդյունքում աշխատողները զերծ կմնան աշխատանքային շահագործումներից:

Խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը առաջարկեց արձանագրել, որ խորհրդի անդամների մակարդակով ընդունելի չէ նախագծի ներկա տարբերակը: Արձանագրման անհրաժեշտությունը հիմնավորեց այն հանգամանքով, որ ենթախորհրդի անդամները ներկայացնում են իրենց կազմակերպությունների անդամ հանդիսացող մի շարք բիզնեսներ և որ արձանագրումը անհրաժեշտ է խորհրդի անդամների հաշվետվողականության ապահովման համար:

ՈՐՈՇՎԵՑ

Քննարկման արդյունքներով արձանագրվեց, որ ներկայացված դիտարկումների համատեքստում խորհրդի անդամները դեմ են նախագծի ներկայացված տարբերակի ընդունմանը: Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը ենթախորհրդի անդամներին առաջարկեց, մասնավորապես Հայկազ Ֆանյանին և Կարեն Զաքարյանին, նախագծի վերաբերյալ բոլոր առաջարկությունները և դիտարկումները համակարգված կերպով ներկայացնել քարտուղարությանը՝ Սոցիալական հարցերի և աշխատանքի նախարարության համապատասխան վարչության հետ դրանց հետագա քննարկումը կազմակերպելու նպատակով:

Ինչ վերաբերում է թվային հարթակի ստեղծմանը, հաշվի առնելով խորհրդի անդամների դիտարկումները, Ռաֆայել Գևորգյանը նշեց, որ գաղափարն ընդհանուր առմամբ սկզբունքորեն ընդունելի է, սակայն կարիք կա հարթակի հարցը քննարկել առանձին՝ վերջինիս հետ կապված այնպիսի խնդիրների, ինչպիսիք են տվյալների հասանելիության, պաշտպանության և այլ մտահոգությունների հետ կապված լուծումների մշակման նպատակով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 3. Խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի զեկուցմամբ ներկայացվեց կարգավորման մշակման նախապատմությունը և առաջարկվող գործիքակազմը: Վերջինս տեղեկացրեց, որ խնդրի առաջացումը պայմանավորված է 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-ն որոշման մեջ 22 դեկտեմբերի 2022 թվականին կատարված փոփոխություններով, որով ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի անվանման և ապրանքային դիրքի, աշխատանքի կամ ծառայության անվանման և կոդի, ինչպես նաև գնվող ապրանքի քանակի և դրա չափման միավորի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների) տպագրման պահանջ սահմանվեց նաև այն հարկ վճարողների համար, որոնց նախորդ տարվա (2022 թ.-ից սկսած) իրացման շրջանառությունը գերազանցել է 24 մլն դրամը: Նախկինում այս պահանջը տարածվում էր միայն նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների վրա: Միաժամանակ, 2022 թ.-ի ապրիլի 12-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-103-Ն օրենքը, որի համաձայն հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա պետք է տպագրված լինի նաև փաստացի մատուցվող ծառայության շրջանակներում տրամադրվող ճաշացուցակը (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի այլ ապրանքների անվանումները)՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան:

Ամրագրված կարգավորման (2023 թ. հուլիսի 1-ից) կատարումը պահանջում է լրացուցիչ ֆինանսական և վարչարարական բեռ հանդիսանալ փոքր բիզնեսների համար, քանի որ պահանջվելու են տեխնիկական միջոցներ (այդ թվում՝ շտրիխ կոդ սկաներ, շտրիխ կոդի

ջերմային տպիչ, համակարգիչ, ՀԾ), կառավարման ապրանքաշարը ծրագիր մուտքագրելու հմտություններ, ծրագրի և տեխնիկական միջոցների հետագա անխափան աշխատանքը ապահովելու հնարավորություններ: Հաշվի առնելով ապրանքաշարի բազմազանությունը՝ հիմնական բեռը ընկնելու է առևտրի, արտադրության և հանրային սննդի ոլորտում գործող 24 մլն. մինչև 58.35 մլն շրջանառություն ունեցող 5784 տնտեսվարողների վրա:

Քննարկումների ընթացքում նախագծի հիմնավորման և կարգավորման առարկայի հետ կապված իրենց առարկությունները ներկայացրեցին ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ Լեոնիկ Հարությունյանը և Օրի Ալավերդյանը: Մասնավորապես վերջիններս նշեցին, որ ներկայացված հաշվարկները համոզիչ չեն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի առաջնայնությունների և նպատակայնությունների տեսանկյունից:

ՈՐՈՇՎԵՑ

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը հանձնարարեց Խորհրդին՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների կողմից ներկայացված առարկությունների դիտարկմամբ վերանայել նախագծի ֆինանսական բաղադրիչի հաշվարկները՝ նախագծի հետագա ընթացքը կանխորոշելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 4. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի պրոռեկտոր Էլբակ Էլբակյանի համազեկուցմամբ ներկայացրեց առաջարկվող նախագիծը, որի ընդունմամբ նախատեսվում է հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները ազատել ԱԱՀ-ից:

Միաժամանակ նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու միջոցով հնարավորություն տալ շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված

նվիրատվությունները նվազեցնել շահութահարկով հարկման բազայից: Ակնկալվում է, որ նախագծի ընդունման արդյունքում բիզնեսի կողմից ավելի շատ միջոցներ կուղղվեն ԲՈՒՀ-երի, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատությունների կարիքների բավարարմանը:

Նախագծով առաջակվող փոփոխության կարևորության մասով արձագանքեցին «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի, ինչպես նաև «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Արկադի Սահակյանը և Տաթևիկ Գևորգյանը, նշելով, որ փոփոխության ընդունման հանգամանքում իրենց կազմակերպությունները առավել մոտիվացված կլինեն ԲՈՒՀ-երին և միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվություններ տրամադրելու հարցում:

Քննարկումների ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներ Օրի Ալավերդյանը և Լեռնիկ Հարությունյանը ներկայացրեցին նախագծի վերաբերյալ իրենց դիտարկումները: Ընդհանուր առմամբ վերջիններս նշեցին, որ հարկային արտոնությունների տրամադրումն ենթադրում է ռեսուրսների վերաբաշխում, և ըստ էության վաղօրոք կանխորոշված առաջնայնությունների հաշվին, մինչդեռ դրանց արդյունավետությունը վիճահարույց է, քանի որ չկան հստակ հաշվարկներ թե արդյոք տրամադրվելիք հարկային արտոնությունը ինչպես է որակական և քանակական իմաստով ազդելու ոլորտի զարգացման վրա և արդյոք դա համարժեք է արտոնության հետևանքով արձանագրվելիք բյուջետային կորուստներին:

ՈՐՈՇՎԵՑ

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների դիրքորոշումը ընդունելի համարելով, հանձնարարեց Խորհրդին՝ ուսումնասիրել խնդրի կարգավորման հնարավորությունները դրամաշնորհային ծրագրի շրջանակներում և ըստ դրա մշակել համապատասխան օժանդակության ծրագիր:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 5. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գործադիր

տնօրեն Զարուհի Մուրադյանի համազեկուցմամբ ներկայացրեց գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության ժամկետի 25 տարվա վերին շեմի վերանայման հարցը: Մասնավորապես նշվեց, որ առաջարկվում է վարձակալության ժամկետի վերին շեմ սահմանել 50 տարին:

Զեկուցողների կողմից հարցի կարևորությունը հիմնավորվեց այն հանգամանքով, որ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության ժամկետը կարող է սահմանվել մինչև 25 տարի, ինչը որոշակի զսպող ազդեցություն ունի այն ներդրողների համար, ովքեր նախատեսում են համայնքապատկան վարձակալած հողերի վրա հիմնել բազմամյա տնկարկներ:

Համաձայն զեկուցման, ներդրողների հետ քննարկումները ցույց են տալիս, որ խաղողի այգիների, ավանդական պտղատու այգիների, պիստակի և մի շարք այլ բազմամյա բույսերի համար զբաղեցվող հողատարածքների վարձակալության ժամկետը 25 տարով սահմանափակելը չի համապատասխանում նման մշակաբույսերի կենսացիկլի առանձնահատկություններին: Վերջիններն առավել երկարակյաց են և ներդրումների հետգնման տեսանկյունից 25 տարվա պլանավորումն արդյունավետ չէ: Բացի այդ, դրանք նորմալ բերքատվության են հասնում տնկելուց միջինում 7 տարի անց, ինչը կրճատում է հողի օգտագործման եկամտաբեր տարիների թիվը: Եթե հաշվի առնենք նաև կլիմայական երևույթներով պայմանավորված որոշ տարիների բերքի կորստի հավանականությունը՝ ակնհայտ է, որ ներդրողին անհրաժեշտ է պլանավորման առավել երկար հորիզոն:

Հարցի առնչությամբ պարզաբանումներ ներկայացրեց Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը: Մասնավորապես պարոն Խոջոյանը տեղեկացրեց, որ հարցի կարգավորումը գտնվում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավասությունների տիրույթում, քանի որ քննարկման առարկան հիմնականում վերաբերում է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձակալությանը: Պարոն Խոջոյանը նշեց, որ ներկայումս իրականացվող՝ ինտենսիվ այգեգործության խթանման տրամաբանության շրջանակներում դրա ընդհանուր պոտենցիալը հնարավոր է իրացնել 18-25 տարվա ընթացքում: Սակայն երկարամյա՝ խաղողի այգիների, ավանդական պտղատու այգիների դեպքում իրացման ցիկլն իրականում ավելի երկար է: Պարոն

Խոջոյանը մատնանշեց, որ մի կողմից հասկանալի և տրամաբանական է հողերի վարձակալության ժամկետների սահմանափակումները՝ ներկայիս անընդհատ փոփոխվող տնտեսական առաջնայնությունների, դեմոգրաֆիկ և այլ խնդիրների դիտարկմամբ, քանի որ նման սահմանափակումը համայնքային իշխանություններին հնարավորություն է տալիս ցուցաբերել տնտեսական որոշակի ճկունության՝ համայնքային հողերի տիրապետման տեսանկյունից, սակայն մյուս կողմից հարցի նման կարգավորումը չի բխում ներդրումների և հողօգտագործման արդյունավետության բարձրացման տրամաբանությունից:

Հարցի վերաբերյալ դիտարկումներ ներկայացրեցին նաև ենթախորհրդի այլ մասնակիցները:

ՈՐՈՇՎԵՑ

Քննարկումների արդյունքներով նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը առաջարկությամբ որոշվեց նախագիծը ներգերատեսչական մակարդակով քննարկել և արդյունքներով՝ պարոն Ուռուտյանի մասնակցությամբ լրամշակել, որից հետո վերջինիս շուրջ կազմակերպել քննարկում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ոլորտային պատասխանատուների հետ:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 6. Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը՝ առողջապահություն նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ահարոն Բարսեղյանի և առողջապահական ոլորտի փորձագետ Սամվել Խարազյանի համազեկուցմամբ ներկայացրեց առողջապահության պարտադիր ապահովագրության հայեցակարգը: Մասնավորապես ներկայացվեց, որ առողջապահության պետական ֆինանսական միջոցների պակասը և գրպանից դուրս կատարվող ծախսերի անկառավարելիությունը, խոչընդոտում են համակարգի զարգացմանը և բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանը, նպաստում է բազմաթիվ ընտանիքների աղքատացման առողջապահական աղետալի ծախսերի պատճառով, խոչընդոտում է բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների հասանելիության և ֆինանսական մատչելիության

բարելավմանը: Տնային տնտեսությունների եկամուտներից առողջապահական ծախսերին 10%-ից ավելին ուղղելու ցուցանիշով (16.1%), Հայաստանը գերազանցում է համաշխարհային (12.7%) և տարածաշրջանային (7.4%) միջին ցուցանիշները: Բնակչության շուրջ 9%-ի մոտ սպառողական ծախսերի ավելի քան 25%-ը կազմում են առողջապահական ծախսերը, որի հետևանքով վերջիններիս շուրջ 6%-ը աղքատանում է՝ ինչն ամենաբարձր ցուցանիշներից մեկն է տարածաշրջանում:

Ներկայացվեց նաև, որ ԱՀԱ մշակվել է հաշվի առնելով միջազգային համանման փորձը և վերջինիս ներդրման հիմնական նպատակը բնակչության բոլոր խմբերի համար առողջապահական հիմնական ծառայությունների ֆինանսական հասանելիության ապահովումն է: Հայեցակարգը պետք է հիմք հանդիսանա առողջապահության նախարարության կողմից իրականացվող համալիր միջոցառումների հայեցակարգային մոտեցումները ամրագրելու, առողջության համապարփակ ապահովագրության մասին օրենքը, այլ հարակից օրենսդրական փոփոխությունները մշակելու և 2024 թվականից առողջության համապարփակ ապահովագրության փուլային ներդրումն ապահովելու համար:

Խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին իրենց մտահոգությունները հայեցակարգում ամրագրված որոշ կետերի վերաբերյալ: Մասնավորապես «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում», «Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ՀԿ–ի ներկայացուցիչները խնդրեցին տիկին Լենա Նանուշյանին ներկայացնել որոշ պարզաբանումներ օրինակ՝ պետական ապահովագրության համակարգի ներդրման դեպքում մյուս ապահովագրական կազմակերպությունների համար հնարավոր մրցակցային խնդիրների առաջացման, գործատուների և աշխատողների համար պարտավորությունների առաջացման չափի հետ կապված և այլն:

ՈՐՈՇՎԵՑ

Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը շնորհակալություն հայտնեց ներկայացված առաջարկությունների համար և հավաստիացրեց, որ դրանք կդիտարկվեն հայեցակարգի ընդունումից հետո՝ համապատասխան իրավական կարգավորումների մշակման համատեքստում:

Նիստը նախագահող

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X _____

_____

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ